Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Օշականի Փ. Բաբկենյանի անվան հիմնական դպրոց» ՊՈԱԿ

Թեմա՝ Գործնական աշխատանքների կազմակերպումը մայրենիի դասերին

Վերապատրաստող, մենթոր՝ Նարինե Մեսրոպյան

Ուսուցիչ՝ Իրինա Միսակյան

2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ……3
Գլուխ I
1.1 Գործնական աշխատանքների տեսակներն ու փուլերը……4
1.2 Գործնական աշխատանքներն I դասարանում……8
1.3. Գործնական աշխատանքները II-IV դասարաններում……10
ԳԼՈՒԽ 2
2.1 Գործնական աշխատանք…….. 15
2.2 Գործնական աշխատանք 2 …….. 17
Եզրակացություն …… 19
Գրականության ցանկ …….. 20

Ներածություն

Մայրենի լեզվի դասավանդումը յուրահատուկ բնույթ ունի հատկապես տարրական դպրոցում: Հայերենի դասընթացը ոչ միայն բուն լեզվական, այլև ճանաչողական արժեք ունեցող գիտելիքների հաղորդման հիմնական միջոց է: Հետևաբար՝ ընթերցանության նյութերը սովորողների լեզվաքերականական գիտելիքների ու լեզվագործածության կարողությունների, լեզվական ու գրական ճաշակի զարգացման հետ միասին պետք է ապահովեն նաև բնության, մարդու և հասարակական կյանքի մասին տվյալ տարիքին ու կրթական մակարդակին համապատասխան գործնական ու մատչելի գիտելիքների ձեռքբերում:

Չափորոշչային պահանջներից հետևում է, որ այսօր անհրժեշտություն է առաջանում որոնելու կրթական գործընթացի կազմակերպման համապատասխան միջոցներ և ձևեր, որոնց օգնությամբ կարելի կլինի իրագործել աշակերտների ինքնուրույն ստեղծագործական աշխատանքները: Ստեղծագործական աշխատանքի ձևերից են նաև աշակերտների գործնական աշխատանքները:

Գործնական աշխատանքների ընթացքում պետք է իրականացվեն այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գիտելիքների որոնումը, դրանց իմաստավորումը, ամրապնդումը, կարողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը, գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը:

Գործնական աշխատանքի սահմանները շատ ընդարձակ են և իրենց մեջ ներառում են նաև աշակերտների կողմից կատարվող հետազոտական աշխատանքներն ու նախագծային գործունեությունը:

Հետազոտության նպատակը:

- աշակերտների մոտ բարելավել և զարգացնել սոցիալական հմտություններ,
- նպաստել անհատի ինքնադրսևորմանը, կենսագործունեությանը և կրթության շարունակականության ապահովմանն ուղղված հմտությունների զարգացմանը:

Հետազոտության խնդիրները:

1. Ուսումնասիրել մայրենիի դասին գործնական աշխատանքների կազմակերպման եղանակները:
2. Բացահայտել անհատի ինքնադրսևորման, ստեղծագործական մտածողություն դրսևորելու, ձևակերպելու և լուծելու կարողությունների զարգացումը:

ԳԼՈՒԽ 1

1.1 Գործնական աշխատանքների տեսակներն ու փուլերը:

2000-ական թվականներից սկիզբ առած կրթական բարեփոխումների ալիքը առաջադրեց աշակերտների ձեռք բերած գիտելիքները գործնականում կիրառելու կարողությունների ու հմտությունների ձևավորման ու զարգացման կարևոր պահանջ: Այն որ գիտելիքը չի կարող ինքնանպատակ լինել, գիտենք բոլորս, բայց ավանդաբար (թե՞ հարկադրված) դրա գործնական կիրառման փորձառությունը թողնում էինք կյանքին:

Կրտսեր դպրոցի շրջանավարտը պետք է կարողանա հաղորդակցվել, ընկալել ուրիշների խոսքը, արտահայտել սեփական մտքերը, կարդալ և հասկանալ գրավոր պարզ տեքստեր: Ինքնակազմակերպվելու և ինքնուրույն գործունեություն ծավալելու, անձնական գործերը պլանավորելու և իրականացնելու պահանջը նույնպես առաջադրվում է տարրական դպրոցն ավարտած երեխային: Միաժամանակ նա պետք է տիրապետի սովորելու հիմնական հմտություններին, դրսևորի կամք և վստահություն սեփական ուժերի հանդեպ, լինի նախաձեռնող, կարողանա աշխատել համագործակցված, հանդես գա որպես թիմի անդամ, ունենա համակարգչային տարրական գրագիտություն, գնահատի իր հնարավորությունները, գիտակցի և արժևորի իր ազգային ինքնությունը, հարգի և ընդունի ընտանեկան ու հասարակական կյանքի արժեքները, ձևավորի օբյեկտիվ ինքնագնահատական, դրսևորի աշխարհաճանաչողության գործուն և առողջ հետաքրքրասիրություն: ՀՀ կրթության պետական նոր չափորոշչային այս պահանջների մեծ մասն իրականացնելու ուղիղ ճանապարհը գործնական աշխատանքների կազմակերպումն է: Գործնական անվանենք սովորողների կողմից կատարվող այն աշխատանքները, որոնք վերաբերում են նրանց ձեռք բերած գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառություններին:

Գոյություն ունի անմիջական կապ կրթության բովանդակային երեք բաղադրիչների (գիտելիք, կարողություն, հմտություն, արժեքային համակարգ) միջև: Որպեսզի գիտելիքը կարողություն, իսկ հետո նաև հմտություն դառնա, հարկավոր է գործնականում կիրառել այն, քննել-համադրել-վերլուծել-դատողություններ անել, այդ կերպ հմտանալ, սեփական կարծիք ու վերաբերմունք ձևավորել և դառնալ տվյալ գիտելիքը կրողը:

Գործնական առաջադրանքները միշտ էլ (հիմա՝ առավել) եղել են յուրաքանչյուր դասի կարևոր բաղադրիչներից մեկը և արդյունավետության հիմնական ցուցիչը: Ուստի անհրաժեշտ է, որ դրանք լինեն նպատակային, բազմաբնույթ և բազմաբովանդակ:

Տարիներ շարունակ ուսումնական գործընթացի գլխավոր շեշտադրումը կատարվել է սովորողներին տեսական գիտելիքների մեծ պաշար հաղորդելու փաստի վրա: Մինչդեռ այժմ սովորածը գործնականում կիրառելուց զատ կարևորում է ուսուցման գործնական եղանակը: Աշակերտները սովորում են գործելով, ինչ-որ բան փորձարկելով, այսինքն՝ ուսումնական գործողությունների և վարժությունների կատարման արդյունքում:

Դասը պլանավորելիս պետք է նախատեսել երկու կարգի գործունեություն.

1. Ուսուցողական-հետազոտական. այդ ընթացքում աշակերտները հնարավորություն են ստանում սեփական փորձառությամբ կառուցելու (‹‹հայտնագործել››) գիտելիքը:
2. Ամփոփիչ, երբ աշակերտները, կիրառելով իրենց սովորածը, կոնկրետ առաջադրանք են կատարում, զարգացնում իրենց կարողությունները, հմտանում գործնական աշխատանքի շնորհիվ:

Գործնական աշխատանքի առաջին տեսակն առանձին առաջադրանքների տեսքով սովորաբար կազմակերպվում է յուրաքանչյուր դասի ժամանակ, իսկ երկրորդ տեսակի կիրառումն արդյունավետ է մեծ թեմաների ամփոփման ժամանակ:

Երեխաներն ու նրանց ծնողները գործնական աշխատանքի մասին տեղեկացվում են թեմայի ուսուցման սկզբում: Հենց այդ ժամանակ էլ տրվում են առաջադրանքները, և նշվում է ժամկետը: Այդպիսով երեխաները հնարավորություն և ժամանակ են ունենում նախապատրաստվելու գործնական աշխատանքին (նյութեր հայթայթել, պաստառներ, տեսանյութեր պատրաստել, գրքույկներ, գծանկարգեր կազմել և այլն):

Ելնելով թեմայի ծավալից և բովանդակությունից՝ կարելի է նաև գործնական աշխատանքը զուգորդել ամփոփման դասի հետ, որն առավել արդյունավետ է դառնում եթե կազմակերպվում է մրցույթստուգատեսի կամ խաղարկային այլ եղանակով:

Գործնական աշխատանքի տեսակը որոշելիս հաշվի եմ առնում մի շարք հանգամանքներ.

1. Ի՞նչ գիտելիքներ են հարկավոր աշխատանքը կատարելու համար:
2. Ինչ նյութեր են անհրաժեշտ:
3. Ում հետ կարող է համագործակցել աշակերտը:
4. Երբ և ինչ խորհրդատվության կարիք կարող է նա ունենալ:

Գործնական աշխատանքի մասին տեղեկացվելիս նրանք պետք է հստակ պատկերացում ունենան, թե ինչ է պահանջվում իրենցից: Սա աշխատանքի կազմակերպման նախապատրաստական փուլն է, երբ աշակերտները սովորաբար ավելի շատ են խորհրդատվության կարիք ունենում: Կարևոր է, որ այդ խորհրդատվությունը լինի պարբերական. հնարավոր է, որ տարբեր աշակերտներ տարբեր ժամանակներում ուսուցչի կամ մեկ այլ մեծահասակի օգնության կարիքն ունենան: Ուստի հարկավոր է նրանց տեղեկացնել, որ գործնական աշխատանքին առնչվող հարցերով կարող են դիմել ամեն օր՝ դասերից հետո: Խորհրդատվության ընթացքում ոչ թե ուղղակի և սպառիչ պատասխան եմ տալիս աշակերտների հարցերին, այլ ուղղորդում եմ նրանց, մեկնաբանում, աջակցում, երբեմն նաև նոր հարցեր հավելում՝ մղելով նրանց ինքնուրույն հետազոտական աշխատանքի: Խորհրդատվության նպատակը աշակերտին հարցի լուծումը գտնելու գործում աջակցելն է, այլ ոչ թե նրա փոխարեն լուծումներ առաջադրելը: Այդպես վարվելով, օգնում եմ իմ սաներին սովորել, սովորել իմացածը համակարգել և կիրառել այն կոնկրետ առաջադրանքներ կատարելիս: Չէ՞ որ հենց սա է գործնական աշխատանքի հիմնական նպատակը:

Պայմանականորեն կարելի է առանձնացնել գործնական աշխատանքի կազմակերպման երեք փուլ.

1. Նախապատրաստական
2. Աշխատանքի կատարման
3. Աշխատանքը ներկայացնելու

Կարևոր է, որ գործնական աշխատանքի արդյունքում աշակերտների կողմից ստեղծված նյութերն ինքնանպատակ չլինեն: Այսինքն՝ դրանք նախատեսվեն ոչ թե մեկանգամյա օգտագործման համար, այլ դառնան ուսումնական նյութ, որը հետո տարբեր առիթներով կարելի է կիրառել: Իսկ դա նշանակում է, որ պատրաստված նյութերը պետք է լինեն բովանդակալից, գեղեցիկ ձևավորված և գրագետ ու անսխալ ձևակերպված: Այս մոտեցման պայմաններում թերևս կարելի է հավելել ևս մեկ փուլ՝ հետագա գործածության նպատակով աշխատանքների լրամշակում:

Աշակերտները գործնական աշխատանքի ժամանակ ակտիվորեն համագործակցում են միմյանց հետ, նյութեր հավաքում, դասակարգում դրանք, համադրում, վերլուծում, համատեղ որոշում իրենց աշխատանքը ներկայացնելու եղանակները: Աշխատանքը շահեկան է դառնում, երբ դրան մասնակցում են նաև ծնողները: Ծնողներին մասնակից դարձնելով ամբողջ գործընթացին՝ մենք մի կողմից դրական վերաբերմունք ենք ձևավորում մեր ընդհանուր գործի նկատմամբ, մյուս

կողմից՝ աշակերտների համար բարենպաստ պայմաններ ստեղծում տեխնիկական աջակցություն գտնելու հարցում (ներկեր, թղթեր, պաստառներ, օժանդակ այլ նյութեր ձեռք բերել, ցուցադրություն պատրաստել, դասասենյակը կամ սրահը ձևավորել և այլն):

Գործնական աշխատանքն ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչներից է, իսկ դրա արդյունավետ կազմակերպումը՝ ուսուցչի կարևորագույն խնդիրներից մեկը:

Գործնական աշխատանքը մի կողմից ուսումնական առաջադրանք է, այսինքն՝ այն, ինչ պետք է անի աշակերտը, մյուս կողմից՝ այդ առաջադրանքի կատարման ընթացքում համապատասխան գործունեության՝ հիշողության, մտածողության, ստեղծագործական երևակայության դրսևորման ձև, որն արդյունքում աշակերտին տալիս է միանգամայն նոր, նախկինում նրան անծանոթ գիտելիքներ, կամ էլ արդեն ունեցած գիտելիքների խորացում:

1.2 Գործնական աշխատանքներն I դասարանում

Դպրոցական ուսումնառության հենց առաջին օրերից սկսած՝ կարևոր է, որ երեխան դառնա ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցը:

I դասարանը գործնական կարողությունների զարգացման առաջին փուլն է: Գործնական աշխատանքն այս դասարանում կրում է սոսկ ուսուցանող բնույթ: Այս փուլում աշխատանքը հիմնականում նպատակաուղղված է երևակայության, ստեղծագործական մտածողության, դիտարկման, հարցեր տալու կարողությունների զարգացմանը, որն էլ իր հերթին նպաստում է գործնական կարողությունների զարգացմանը:

I-ին դասարանում, ինչ խոսք երեխաները կդժվարանան գործնական աշխատանքները կատարել գրավոր, ուստի պետք է կատարել այնպիսի բանավոր վարժություններ, որոնք նպաստում են երևակայության և ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

Կարելի է հանձնարարել հետևյալ առաջադրանքներով վարժությունները.

- շարունակի՞ր անավարտ պատմվածքը, հեքիաթը,
- հորինի՞ր պատմվածք որևէ հերոսի անունից,
- նկարագրի՞ր քո երևակայական կյանքի մեկ օրը,
- որոշի՞ր, թե որքան գործողություններ կարելի է կատարել որևէ առարկայի հետ, օրինակ՝ աղյուսի, թերթի, կավիճի մի կտորի,
- որևէ առարկայի համար անվանի՞ր որքան հնարավոր է շատ հատկանիշներ և այլն,
- եկե՞ք միասին մտածենք, թե ինչու ամռանը սարերի վրայի ձյունը չի հալվում,
- ինչու՞ են երեխաները սիրում խաղալ համակարգչային խաղեր և այլն:

Կատարելով ենթադրություններ՝ երեխաները պետք է սովորաբար իրենց խոսքում կիրառեն հետևյալ բառերը. *ենթադրենք, ասենք թե, հնարավոր է, կարող է լինել* և այլն: Կարևոր կարողություն է նաև հարցեր առաջ քաշելու կարողությունը: Չէ՞ որ յուրաքնաչյուր ճանանչողական գործընթաց սկսվում է հարցադրումներից: Այդ նպատակով տրվում են մարդկանց, կենդանիների պատկերներով նկարներ, և երեխաներին առաջարկվում է պատասխանել տրված հարցերին:

Այս գործնական վարժությունները նպատակ ունեն աշակերտների մոտ ձևավորել այնպիսի անձնային որակներ, ինչպիսիք են սկզբունքայնությունը, ազատ ինքաարտահայտումը:

Գործնական վարժությունները ճանանչողական-հետազոտական և ստեղծագործական գործընթացների սկիզբն են: Գործնական առաջադրանքներն իրենց մեջ ներառում են ճանանչողական գործընթացներ՝ սկսելով ընկալման, մտապահման, իմաստավորման գործողություններից և ավարտելով տրամաբանական ու ստեղծագործական գործընթացներով:

1.3. Գործնական աշխատանքները II-IV դասարաններում

II դասարանից սկսած՝ արդեն կարելի է առաջադրել գործնական աշխատանքներ, որոնք կառուցված կլինեն մի շարք գործնական վարժություններից: Գործնական աշխատանքը ենթադրում է այնպիսի աշխատանք, որի կատարման ընթացքում աշակերտը հայտնվում է իր համար ոչ սովորական իրավիճակում, որտեղ անհրաժեշտ է հնարամտություն, ստեղծագործական մոտեցում, որպեսզի լուծի իր առջև դրված խնդիրը: Ընդ որում՝ գործնական աշխատանքը պետք է կազմված լինի այնպիսի առաջադրանքներից, որոնք հնարավոր չէ կատարել առանց ուսումնական նյութի լավ իմացության: Այսինքն՝ գործնական աշխատանքը ուսումնական գործընթացում յուրացված գիտելիքների, կարողությունների և հմտությունների կիրառումն է:

II-IV դասարաններում գործնական աշխատանքները նպաստում են ոչ միայն յուրացված գիտելիքների գործնական կիրառման կարողությունների զարգացմանը, այլև դպրոցականների այնպիսի մտածողական գործընթացների զարգացմանը, ինչպիսիք են՝

- դասակարգումը,
- ամփոփումը,
- տարբեր հնարավոր որոշումների ընտրությունը,
- իր աշխատանքի գործողությունների ծրագրի կազմումը,
- միևնույն իրը կամ երևույթը տարբեր տեսանկյուններից դիտար-կումը,
- տարբեր իրերի կամ երևույթների համեմատումը,
- ինքնաստուգումը և այլն:

Գործնական աշխատանքների արդյունավետ իրականացումը կախված է մտածողության այս գործընթացների ճշգրիտ կազմակերպումից:

Գործնական աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները.

1. Ցանկացած գործնական աշխատանք պետք է ունենա կոնկրետ նպատակ:
2. Գործնական աշխատանքի ընթացքում երեխաները պետք է կարողանան կիրառել իրենց՝ մինչ այդ յուրացրած գիտելիքներն ու կարողությունները:
3. Յուրաքանչյուր աշակերտ պետք է իմանա կատարման ընթացքը և պետք է կիրառի ինքնուրույն գործելու հնարքները:
4. Գործնական աշխատանքը պետք է համապատասխանի սովորողների կարողություններին:

5. Գործնական աշխատանքի ընթացքում ստացված արդյունքները կամ եզրահանգումները պետք է կիրառվեն ուսումնական գործընթացում:
6. Անհրաժեշտ է ապահովել տարբեր տեսակի գործնական վարժությունների համադրումը:
7. Գործնական աշխատանքի բովանդակությունն ու քայլաշարը պետք է հետաքրքրություն առաջացնեն:
8. Գործնական աշխատանքը պետք է ապահովի սովորողների ճանանչողական տրամաբանական կարողությունների զարգացումը:
9. Գործնական աշխատանքի բոլոր տեսակները պետք է ապահովեն ինքնուրույն ճանաչողական գործունեություն ծավալելու կարողությունը:

Կրտսեր դպրոցականների ստեղծագործական մտածողության և հետազոտական կարողությունների ձևավորման ու զարգացման նպատակով հաճախակի կիրառվում է նախագծային և հետազոտական մեթոդները:

Կրտսեր դպրոցականներին մայրենիից տրվող գործնական աշխատաքները մեծ հաշվով կարելի է անվանել ստեղծագործական-հետազոտական աշխատանքներ:

Անհրաժեշտ է զարգացնել ստեղծագործելու կարողություն: Ուստի, ընտանիքի և դպրոցի գլխավոր խնդիրն է ժամանակին տեսնել, դիտարկել երեխայի ունակությունները և հիմք նախապատրաստել նրա ստեղծագործական ունակությունների իրագործման համար:

Հետազոտական աշխատանքների նկատմամբ պահանջմունքը պայմանավորված է երեխայի բնույթով: Երեխան ի ծնե հետազոտող է: Մանկական վարքի կարևոր հատկանիշներ են դիտարկվում նոր տպավորությունների նկատմամբ անհագ ծարավը, հետաքրքրասիրությունը, դիտարկելու, փորձելու անդադար ձգտումը, շրջապատող աշխարհի մասին նոր տեղեկությունների որոնումը:

Հետազոտական գործունեության ընթացքում երեխան սովորում է դիտարկել, խորհել, համեմատել, պատասխանել հարցերին, կատարել եզրահանգումներ, վերականգնել պատճառահետևանքային կապը և այլն:

Հետազոտական գործունեության կազմակերպման ընթացքում երեխաները պետք է կիրառեն տարբեր մեթոդներ ու հնարներ, ճիշտ համակցեն դրանք միմյանց հետ: Մեթոդների ընտրությունը և դրանց համակցված կիրառումը որոշվում է երեխայի տարիքային առանձնահատկությամբ և այն կրթադաստիարակչական նպատակներով, որոնք առաջադրվում են:

Կրտսեր դպրոցականների հետազոտական գործունեությունն ունի իր առանձնահատկությունները.

- այն նպատակաուղղված է այնպիսի գիտելիքների յուրացմանը, որոնք հետաքրքրում են սովորողներին և ծրագրային պահանջների շրջանակում չեն,
- օգնում է յուրացնել այնպիսի հետազոտական կարողություններ, որոնք անհրաժեշտ են նրան ամբողջ կյանքի ընթացքում,
- զարգացնում է հաղորդակցական կարողությունները,
- ընթանում է ուսուցչի և սովորողների ստեղծագործական համագործակցությամբ:

Հետազոտական գործունեության արդյունքը ոչ միայն այն գիտելիքներն են, որոնք նա ձեռք է բերում, այլև ճանանչողական գործունեություն ծավալելու միջոցները, որոնք նպաստում են անձի մտավոր զարգացմանը:

Տարրական դասարաններում համարյա բոլոր հետազոտական աշխատանքները կրում են կոլեկտիվ բնույթ: Այն սովորեցնում է երեխաներին աշխատել կոլեկտիվում, ընդհանուր հետաքրքրությունները վեր դասել սեփականից:

Արդեն IV դասարանում շատ աշակերտներ կարող են ինքնուրույն ընտրել հետազոտության թեման:

Հետազոտական աշխատանքները դասակարգվում են՝

- ըստ աշակերտների քանակի՝ անհատական, զույգով, խմբային,
- ըստ անցկացման վայրի՝ դասարանական և արտադասարանական,
- ըստ ժամանակի՝ երկարատև, կարճատև,
- ըստ թեմայի՝ առարկայական և ազատ,
- ըստ խնդրի՝ դասի ընթացքում ուսումնասիրված ծրագրային նյութի յուրացման խորացում և հարցեր, որոնք ծրագրային նյութ չեն:

Իսկ նախագծային աշխատանքի էությունն այն է, որ երեխաները, իրենց հետաքրքրությունից ելնելով, ուսուցչի հետ միասին իրականացնում են նախագիծ՝ լուծելով որևէ հետազոտական խնդիր:

Նախագծային և հետազոտական գործունեությունները սկզբունքորեն տարբեր են իրենց ուղղություններով, բնույթով և գործունեության տեսակների բովանդակությամբ: Հետազոտությունը ճշմարտության որոնումն է, իսկ նախագիծը՝ կոնկրետ որևէ պարզորոշ խնդրի լուծումը:

Տարրական դասարաններում նպատակահարմար է նախագծային և հետազոտական գործունեությունը միավորել և անցկացնել նախագծային-հետազոտական գործունեություն:

Նախագծային-հետազոտական գործունեությունը սեփական հետազոտության նախագծման գործունեությունն է, որը ենթադրում է նպատակների և խնդիրների առկայություն, համապատասխան մեթոդների ընտրության սկզբունքներ, հետազոտության ընթացքի պլանավորում, հետազոտության իրականացման գնահատում, հետազոտության արդյունքների ներկայացում:

Նախագծի մեթոդի հիմքում ընկած է սովորողների տրամաբանական-ճանանչողական, նոր գիտելիքների ինքնուրույն յուրացման, տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու, քննադատական և ստեղծագործական մտածողություն դրսևորելու, խնդիրները տեսնելու, ձևակերպելու և լուծելու կարողությունների զարգացումը:

Նախագծային գործունեությունը ժամանակակից իրականության որոշակի արտացոլումն է, որտեղ ցանկացած արդյունք ստացվում է ոչ թե պատահականորեն, այլ նպատակաուղղված և ճիշտ պլանավորված աշխատանքի միջոցով: Այսպիսով՝ նախագծային գործունեությունը որոշակի քայլերի շարք է, որը սկսվում է մարդու առջև դրված իրական խնդրի առաջքաշումով և վերջանում որոշակի արդյունքով:

Տարրական դպրոցում նախագծային գործունեության կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է հաշվի առնել կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեբանաֆիզիոլոգիական ունակությունները:

Մանկական նախագծային աշխատանքի թեմաները նպատակահարմար է ընտրել ուսումնական առարկաների բովանդակությունից կամ մոտ բնագավառներից:

Ցանկացած գործունեության (այդ թվում նաև նախագծային) իրականում կախված է դրա ճիշտ կազմակերպումից: Այստեղ կարող է ‹‹եռամիասնության›› կանոնը, այսինքն՝ ուսուցչի, աշակերտի, ծնողի համագործակցությունը: Խմբում ուսուցիչն ուղղորդողը, շտկողը, խորհրդատուն, ինչպես նաև ոգևորողն է: Աշակերտն ու ծնողը գործում են միասնաբար, որտեղ երեխան գաղափարի կրողն է, իսկ ծնողն օգնում է նրան գտնելու անհրաժեշտ տեղեկատվությունը և իրականացնելու գաղափարները: Այսպես՝ շաբաթվա ընթացքում երկու անգամ պետք է ան անցկացնել աշակերտների հետ նախագծի մշակման պարապմունքներ՝ սովորեցնելով նրանց պլանավորել, տեղեկատվություն հավաքել, ծանոթացնելով տարբեր հետազոտական մեթոդների:

Նախագծի գործնական մշակումն սկսելուց առաջ երեխաներին պետք է ծանոթացնել հետազոտական մեթոդներին, որոնք նրանք պետք է կիրառեն նախագծի շուրջ աշխատանքի ընթացքում.

- ինքնուրույն մտածել,
- կարդալ գրքեր,

- հարցնել մեծերին,
- դիմել համակարգչի օգնությանը,
- դիտարկել,
- խորհրդակցել մասնագետի հետ,
- անցկացնել փորձաքննություն և այլն:

Շնորհանդեսի ընթացքում ներկայացվում է հետազոտական մեթոդների և դրված խնդիրների կապը: Հենց սա է գործողությունների պլանը (այսինքն՝ խնդիրների գործնական իրագործումը մեթոդների միջոցով):

Այսպիսիով կիրառելով երկու մեթոդներն էլ կարելի է նպաստել աշակերտների հետազոտա-նախագծային կարողությունների զարգացմանը՝ գործնական աշխատանքների ընթացքում:

ԳԼՈՒԽ 2

2.1 Գործնական աշխատանք

Դասրան՝ Չորրորդ

Թեմա՝ Փոքրիկ հաղորդման պատրաստում՝ հայ երգահաններից մեկի մասին /Կոմիտաս կամ Սայաթ-Նովա/:

Նպատակը՝ Կզարգանան աշակերտների հաղորդում պատրատելու և վարելու կարողությունները.

- խմբային համագործակցային աշխատանք կազմակերպելու հմտությունը,
- ինքնուրույն ընթերցանությունը, ընթերցածից տեղեկություններ քաղելու կարողությունը,
- կձևավորվի ցանկացած աշխատանք կատարելու նախագծման և քայլաշարի մշակման կարողություն,
- կարթնանա սեր ու հարգանք հայ մեծերի ու նրանց թողած անգնահատելի ժառանգության նկատմամբ:

Ընթացքը

Գործնական աշխատանքի նախագծում.

Քայլ 1. Ընտրել որևէ ճանանչված հայ երգահանի և հավաքել նրա մասին տեղեկություններ՝ օգտվելով տարբեր աղբյուրներից:

Քայլ 2. Նախագծել պաստառի կառուցվածքը:

Քայլ 3. Խմբում յուրաքանչյուր աշակերտի հանձնարարության բաշխում և պլանավորում:

Քայլ 4. Հնարավորության դեպքում ձեռք բերել նախընտրած երգահանի ստեղծագործությունների ձայնագրություններից:

Քայլ 5. Ցուցաբերել ստեղծագործական մոտեցում պաստառի ձևավորմանը և հաղորդման պատրաստմանը:

Աշխատանքի կատարման համար տրամադրվում է մեկ շաբաթ ժամանակ:

Գործնական աշխատանքի ներկայացում

- Յուրաքանչյուր խմբի տրվում է 2-3 րոպե նախապատրաստման և 15-17 րոպե՝ գործնական աշխատանքի ներկայացման համար:
- Յորաքանչյուր աշակերտ ներկայացնում է հանձնարարության իր բաժինը /‹‹Շրջայց պատկերասրահում›› մեթոդով/:

Առաջին խումբ

Խմբի անդամներից մեկը ներկայացրեց նախընտրած երգահանին՝ Կոմիտասին (Սողոմոն Սողոմոնյան) դիմանկարով:

Մեկ ուրիշը ներկայացրեց երգահանի կենսագրությունը:

Խմբի անդամներից մեկը ներկայացրեց երգահանի ստեղծագործությունները:

Ունկնդրեցինք Երկինքն ամպել է ժողովրդական երգից մի հատված՝ Կոմիտասի մշակմամբ, իսկ ձայնակցեց խմբի անդմաներից մեկը:

Պաստառը ձևավորված էր ստեղծագործական մոտեցմամբ.

- Հնգյակ
- Ակրոստիքոս
- Խաչբառի տեսքով /հարցեր են առաջադրում մյուս խմբին/

Երկրորդ խումբ

Խմբի անդամներից մեկը ներկայացրեց նախընտրած երգահանին՝ Սայաթ-Նովային /Հարություն Սայադյան/ դիմանկարով:

Մեկ ուրիշը ներկայացրեց Սայաթ-Նովայի կենսագրությունը:

Խմբի անդամներից մեկը ներկայացրեց Ս. Կապուտիկյանի բանաստեղծությունը՝ նվիրված աշուղ, բանաստեղծ, երգիչ Սայաթ- Նովային:

Խմբի անդամներից մեկը արտասանեց:

Խումբը երգեց Քանի վուր ջան իմ երգը:

Խմբի անդամներից մեկը հանդես բերեց ստեղծագործական մոտեցում՝ պաստառի կառուցվածքում ներառելով հնգյակ:

Խմբի յուրաքանչյուր անհատ գնահատվեց անհատապես /միավորներով/:

2.2 Գործնական աշխատանք 2

Դասարան՝ Երկրորդ

Թեմա՝ Իմ սիրելի կենդանին

Աշխատանքի ձևը՝ փոքրիկ պաստառ կամ 2-3 էջանոց գրքույկ

Նպատակը՝

- Զարգացնել միմյանց հետ համագործակցելու կարողություններ:
- Սովորեցնել տեղեկատվությունը համակարգել, առանձնացնել կարևորն ու արժեքավորը:
- Մշակել նախագծային աշխատանքներ կատարելու կարողություններ:

Ընթացքը՝

1. Խմբին տրամադրել համապատասխան նյութեր՝
   - Տեղեկատվություն և նկարներ կենդանիների մասին (դրանք հավաքվում են թեմայի ընթացքում աշակերտների միջոցով)
   - Բառարան (անհրաժեշտության դեպքում անծանոթ բառերի բացատրության համար)
   - Գունավոր թղթեր, սոսինձ, մկրատ, գունավոր գրիչներ, պաստառ:

Գեղարվեստական ստեղծագործություններ կենդանիների մասին (բանաստեղծություններ, հանեկլուկներ՝ դրանք նույնպես հավաքվում են թեմայի ընթացքում աշակերտների միջոցով, սակայն ուսուցիչը ևս պետք է ունենա համապատասխան նյութերի հավաքածուներ)

·Գիտելիքների շտեմարաններ, մանկական հանրագիտարաններ և այլ գիտահանրամատչելի գրականություն երեխաների տարիքին համապատասխան:

2. Աշխատանքների կատարման քայլաշատ՝ հրահանգների քարտ՝
   - Ընտրել կենդանուն
   - Տեսակավորել նյութերը, նկարները, գեղարվեստական ստեղծագործությունները
   - Որոշել աշխատանքի ձևը՝ պաստառ կամ գրքույկ
   - Խմբում կատարել աշխատանքի բաժանում (այստեղ հնարավոր է ուսուցչի միջամտությունը)
3. Բուն աշխատանքը՝
   - Ձևավորել գրքույկի կազմը կամ պաստառի վերնագիրը
   - Կենսագրական բանաստեղծություն

   -անունը /այլ անվանում/

   -տեսակը

-բնորոշ արտաքին առանձնահատկություններ

-բնավորության առանձնահտկություններ

-որտեղ և ինչպիսի պայմաններում է ապրում

-ինչով է սնվում

-քանի ձագ է ունենում և ինչպես է խնամում ձագերին

- Ներկայացնել հանելուկներ և բանաստեղծությունոներ
- Հորինել հանելուկ կամ քառատող կենդանու մասին
- Վերջին մասում գրել աշխատանքը կազմողների անունները:

Նման ձևով կարելի է կազմակերպել նաև գործնական աշխատանքներ Իմ սիրելի թռչունը, Իմ սիրելի ծաղիկը թեմաներով:

Եզրակացություն

Ուսումնասիրելով Գործնական աշխատանքների կազմակերպումը մայրենիի դասերին թեման եկել եմ հետևյալ եզրակացության՝

Գործնական աշխատանքների դերն ու նշանակությունը շատ մեծ է ուսման գործընթացում, ինչպես նաև դրանց կիրառումը հետագա կյանքում: Գործնական աշխատանքների ընթացքում իրականացվում են այնպիսի գործողություններ, ինչպիսիք են գիտելիքների որոնումը, դրանց իմաստավորումը, ամրապնդումը, կարողությունների և հմտությունների ձևավորումը և զարգացումը, գիտելիքների ընդհանրացումը և համակարգումը:

Գործնական աշխատանքները նպաստում են, որպեսզի աշակերտներն իրենց գիտելիքներն ինքնուրույն կիրառեն, տրամաբանորեն մտածեն, տեղեկատվական դաշտում կողմնորոշվելու կարողություն ձեռք բերեն, բացահայտեն խնդիրներ, կարողանան դրանք վերլուծել և որոնել դրանց լուծման ուղիները:

Եվ այս ամենից ելնելով, գործնական աշխատանքները աշակերտներին հնարավորություն են տալիս ձեռք բերել ինքնուրույնություն և գործնականում գիտելիքները կիրառելու կարողություն:

Գործնական աշխատանքի արդյունավետությունը պայմանավորված է ուսուցչի կողմից համապատասխան մեթոդների ընտրությունից և դրանց ճիշտ գործածությունից:

Գրականության ցանկ

1. Հանրակրթության պետական չափորոշիչ
2. Կ. Թորոսյան և ուրիշներ, Մայրենի 2-4, Ուսուցչի ձեռնարկ, Երևան, 2012թ.
3. Զուլիետա Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Զանգակ-97, Երևան, 2006թ.
4. ՕՖ. Բաբայան, Գործնական աշխատանքի կազմակերպման մեր փորձից, Նախաշավիղ 2014. N1